ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՐԱՄԱՆ

«02» դեկտեմբեր 2024թ No 6936-Ա

«ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առողջապահության նախարարության կողմից 09.10.2024թ. էլեկտրոնային աճուրդ համակարգով հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն՝ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից նշված չափաբաժիններով:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը արձանագրել է անճշտություններ, որոնք ենթակա են եղել շտկման և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ կայացրել է որոշում մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 12.11.2024թ. ծանուցել է ի թիվս մյուս մասնակիցների նաև «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին արձանագրված անճշտությունները շտկելու մասին, մասնավորապես ..... «Հարգելի մասնակից: «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով շտկել և ճիշտ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների (դեղերի) հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները և արտադրողի հստակ անվանումները: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:»: Շտկման համար սահմանված ժամկետի ավարտին «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից անհրաժեշտ շտկումները չեն իրականացվել և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ և «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետերի պահանջները 22.11.2024թ. հայտերի բացման և գնահատման նիստի ժամանակ գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում մերժել «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտը և «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա: Նույն օրը gnumner.am կայքում հրապարակվել է նշված չափաբաժինների մասով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները: Բացի այդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և

մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Առողջապահության նախարարությունը 27.11.2024թ. թիվ ՎԳ/06.3/35672-2024 գրությամբ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հայտարարությունը հրապարակելու օրվան՝ 22.11.2024թ. հաջորդող տասն օրվա ընթացքում, նախաձեռնելու է «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց: Միաժամանակ, հայտնելով, որ վերոնշված ժամկետում «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնական գանձապետական 900008000446 հաշվեհամարին հայտի ապահովման գումարը՝ 5,406,000 (հինգ միլիոն չորս հարյուր վեց հազար) ՀՀ դրամի չափով վճարելու, վճարման հանձնարարականի բնօրինակը Առողջապահության նախարարություն ներկայացնելու դեպքում՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության, «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազորված մարմին:

Սակայն 02.12.2024թ. դրությամբ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից դեռ չի ներկայացվել «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի մաս 1-ի 4-րդ բաժնի 4.3 կետի 4-րդ ենթակետով սահմանված հայտի ապահովման վճարված լինելու մասին հավաստող վճարման հանձնարարականը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, ինչպես նաև այն հանքամանքը, որ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն չի վճարել «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված հայտի ապահովումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «ԱԷՄՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 02863111, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Աբովյան փ./23) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին սույն հրամանը մեկօրյա ժամկետում պատշաճ ձևով՝ էլեկտրոնային փոստի հասցեին և պատվիրված փոստով ուղարկել «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով՝ հրամանը ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

12/2/2024

X

ՈՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՀ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ